ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՁԱՐՁԻՆ

(Ջուղայի գաղթից)

— Հե՛յ, լավ մանրո՛ւք,
Ասե՛ղ, հուլո՛ւնք,
Մատնի՛ք, մարջա՛ն,
Ապարանջա՛ն...
Հա՛վ, ձո՛ւ բերեք,
Առե՛ք, տարե՛ք,
Խունջիկ-մունջիկ
Հարսն ու աղջի՛կ,
Էժա՛ն կըտամ,
Լա՛վը կըտամ...
Էսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իբրև թե չարչի մի թափառական,
Ձարչու կերպ մըտած, ինչպես վիշապ օձ,
Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան։
— Հե՛յ, ո՞վ կուզի թել ու ասե՛ղ,
Դուրս եկե՛ք, դո՛ւրս, ինձ մո՛տ, էստե՛ղ...
— Ձարչի ախպե՛ր, չարչի ախպե՛ր,
Ասեղ ունի՞ս, էս կողմը բեր։
Կանչեց մի կին՝ հայ գաղթական,

20 Ու մոտ գընաց չարչին կընկան։
— Օ՜, ի՜նչ ասեղ, իսկն օձի քիստ...
Թոփը մի հաց...
— Վո՜ւյ, թանկ է խիստ...
— Է՜, մի՜ խոսիր, քուրի՜կ, էդպես,
25 Շահի կյանքը թե կըսիրես։
— Ամա՜ն, հողեմ գլուխը Շահի,
Աստված Շահից հեռու պահի.
Արևդ ապրի, չարչի ախպեր,
Էդ անունը բերան մի՜ բեր։
30 — Վա՜հ, էսքան էլ չար լինի մա՜րդ.
Ինչ է արել Շահը ձեզ վատ։
Գազան թուրքի սըրից փըրկել,
Ջոր Ջուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ առատ Փարիա,
35 Աչքն էլ քաղցըր միշտ ձեզ վըրա...
— Օ՜ֆ, հերիք է, չարչի ախպե՜ր,
Մի՜ խոսեցնիր ինձ դըրանից։
Երնեկ դըրա ոտը կոտրեր՝
Ջըգար հաներ մեզ մեր տանից։
40 Եկավ վարար հեղեղի պես,
Ջարկեց մեր շեն, մեր լի Ջուղան,
Ոչ Աստըծուն նայեց, ոչ մեզ,
Սըրբեց բերավ ողջ տեղահան։
Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
45 Բանալիներն Արազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Ետ նայեցինք ու կանչեցինք.
«Աստվածածի՜ն Վերին Կաթան,

Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան,
50 Ուր որ գընանք մեր վաթանից՝
Մեզ դարձըրու գերությունից»։
Աղաչեցինք աղերսելով,
Ետ շուռ եկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հըրով, սըրով՝
55 Ծով Արազի ափը հասանք։
Արազը ծո՛վ, Արազն ելմա՛ն,
Դուրս է եկել իր ափերից.
«Անցե՛ք», եկավ մեզ հըրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
60 Ետևը սո՛ւր, առաջը ջո՛ւր,
Սո՛ւգ, վայնասո՛ւն, իրարանցո՛ւմ,
Բառաչում են մեծ ու պուճուր,
Իրար գըրկած՝ գետը լըցվում...
Էն սև օրը, որ մենք տեսանք,
65 Քո թըշնամին թող չըտեսնի...
Ա՜խ, ԵՐԲ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անեծքը երկինք հասնի...
Ու գալիս են չարչու գըլխին
Կիտվում պանդուխտ, գերի հայեր.
70 «Անե՛ծք Շահին, իրեն գահին»,—
Անիծում են երկինքն ի վեր։
Շուռ են գալիս իրենց բընում
Չարչու աչքերն ըսպառնալի,
Ձեռն ու ոտը դող են լինում,
75 Ու սևակնած հարց է տալի.
— Շահի առջև հապա էնօր
Գոռում էիք միաբերան,

Թե ապրում եք դուք բախտավոր
Ու օրհնում եք թախտն ու իրա՞ն...
— Սուտ էր, ախպե՛ր։ Դու մեզնից մեկն՝
Ինչ թաքցընենք մենք քեզանից,
Բայց մեր սիրտը ո՞նց չըծածկենք
Էն մարդակեր չար գազանից։
Սուտ էր... Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վըրա
Ո՛չ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...
Մռընչաց չարչին, աբեն շըպըրտեց,
Դուրս ելավ տակից Շահ-Աբասն ահեղ,
Նաջաղը ցոլաց, իջավ շեշտակի,
Գերի ծերունին փըռվեց տեղնուտեղ։
Փըռվեց... Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վըրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր։